Հաստատված է

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարության գլխավոր քարտուղարի

2019 թ. օգոստոսի 20-ի N 395-Ա հրամանով,

06.02.2020թ. N 81-Ա, 25.02.2020թ. N 135-Ա և

10.04.2025թ. N 458-Ա հրամանների փոփոխ.

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

| 1. Ընդհանուր դրույթներ |
|---|
| **1.1Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**<br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) մասնագիտական կրթության և ուսուցման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 18-34.2-Ղ3-1)<br>**1.2. Ենթակա և հաշվետու է**<br>Վարչության պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է նախարարին:<br>**1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ**<br>Վարչության  պետին ենթակա և հաշվետու են Բաժնի պետերը:<br>**1.4.Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**<br>Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետերից մեկը:<br>**1.5. Աշխատավայրը**<br>Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ.Սարգսյան 3, Կառավարական շենք N 2 |
| **2.Պաշտոնի բնութագիրը** |

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

1. **Կազմակերպում է** մասնագիտական կրթության և ուսուցման փորձնական կրթական ծրագրերի ներդրման, մոնիտորինգի և գնահատման իրականացման աշխատանքները.
2. **կազմակերպում է** մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների, որակավորումների ազգային շրջանակի, ոլորտային որակավորումների շրջանակի և դրանց բնութագրերի մշակման, վերանայման, փորձարկման և ներդրման գործընթացը.
3. **կազմակերպում է մասնագիտական կրթության և ուսուցման, ներառյալ՝ լրացուցիչ և շարունակական կրթության բնագավառում պետական քաղաքականության մշակման աշխատանքները.**
4. **կազմակերպում է** ՀՀ կառավարության գործունեության ծրագրի, ծրագրի իրականացման միջացառումների նախագծերի, կրթության զարգացման պետական, ինչպես նաև ոլորտային հայեցակարգերի, ռազմավարական և բարեփոխումների ծրագրերի մշակման և դրա իրականացման աշխատանքները՝ **մասնագիտական կրթության** և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության **մասով.**
5. **կազմակերպում է** նախարարության համակարգի բյուջետային գործընթացի ապահովումը՝ **մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության մասով**.
6. **կազմակերպում** է Հայաստանի Հանրապետության նախարարությունների, պետական կառավարման այլ մարմինների, պետական կառավարչական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ **մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության վերաբերյալ** ուսումնադաստիարակչական բնույթի միջոցառումների, կրթության հարցերով համաժողովների, խորհրդակցությունների և այլ միջոցառումների իրականացման աշխատանքները.
7. **կազմակերպում** է **մասնագիտական կրթության** և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության բնագավառում միջպետական համագործակցության ծրագրերի մշակումը, միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) իրականացումը, համատեղ միջոցառումներ իրականացման և համագործակցության աշխատանքները, միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի նախագծման, ծրագրերի իրականացման, մոնիթորինգի և գնահատման աշխատանքները.
8. **կազմակերպում** է մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգին առնչվող գործընթացին մասնակցությունը.

9. **կազմակերպում** է մասնագիտական կրթության ոլորտի դասագրքերի, ուսումնական ձեռնարկների մշակման և հաստատման գործընթացի իրականացումը.

10. **կազմակերպում** է մասնագիտական կրթության և ուսուցման ազգային խորհրդի կազմի վերանայման և հաստատման, ՀՀ վարչապետի որոշման նախագծի մշակման, մասնագիտական կրթության և ուսուցման ազգային խորհրդի քարտուղարության գործառույթների իրականացման աշխատանքները.

11. **կազմակերպում է տարբեր** գերատեսչությունների և կազմակերպությունների կողմից մշակված և ՀՀ կառավարության կողմից հաստատված մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական ոլորտներին առնչվող ռազմավարությունների, ծրագրերի, միջոցառումների կատարումը, մոնիթորինգը և հաշվետվությունների ներկայացումը.

12. **կազմակերպում** է մասնագիտական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնների ներդրման աշխատանքների իրականացումը, վերապատրաստման ծրագրերի կազմակերպումը, մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնների գործունեության արդյունավետության մոնիթորինգը և գնահատումը.

13. **կազմակերպում է մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության համակարգի գործունեության մոնիթորինգի (մշտադիտարկման) կազմակերպումը, վերլուծությունը, մատուցվող կրթական և այլ ծառայությունների ծախսարդյունավետության և արդյունավետության գնահատումը.**

14. **կազմակերպում է** Կառավարության հանձնարարականների հիման վրա հաշվետվությունների՝ ներառյալ տարեկան ամփոփիչ, պատրաստումը և ներկայացումը՝ **մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության մասով**.

15. **կազմակերպում է** մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտներին առնչվող այլ գերատեսչությունների, կազմակերպությունների և կառույցների կողմից մշակված իրավական ակտերի, ռազմավարական փաստաթղթերի, զեկույցների և այլ փաստաթղթերի վերաբերյալ առաջարկությունների և դիտողությունների ներկայացումը.

16. **կազմակերպում** է աշխատանքի վրա հիմնված կամ դուալ ուսումնառության ներդրման և համակարգման աշխատանքները.

17. **կազմակերպում է մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները.**

18. **կազմակերպում է մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում խելամիտ** հարմարեցումների ստեղծման և ներառման գործընթացները.

19. **կազմակերպում է** ՄՈՒՀ-երի կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների ձևավորման և վերանայման աշխատանքները.

20. **կազմակերպում է** մասնագիտական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրության մշակման և հաստատման ներկայացման, ուսումնական հաստատությունների կանոնադրությունների վերանայման և հաստատման աշխատանքները.

21. **կազմակերպում է** միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կամ որակավորմամբ կրթությունը սահմանված կարգով շարունակելու գործընթացը.

22. **կազմակերպում** է մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների վերապատրաստման, ատեստավորման և տարակարգի շնորհման գործընթացը.

23. **կազմակերպում** է **մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով դիմած անձանց վերապատրաստող կազմակերպությունների ընտրության գործընթացը.**

24. **կազմակերպում** է մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների ավարտական փաստաթղթերի պատվիրման գործընթացին առնչվող աշխատանքները.

25. **կազմակերպում** է մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական և ոչ պետական հավատարմագրված ուսումնական հաստատություններում ուսումնասիրությունների իրականացման, պարզաբանումների ներկայացման և խորհրդատվության տրամադրման աշխատանքները.

26. **կազմակերպում է** նախարարության ենթակայությամբ գործող **մասնագիտական** ուսումնական հաստատությունների գործունեությունը.

27. **կազմակերպում** է պետական և հանրային **մասնագիտական ուսումնական հաստատությունն**երի մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության գործընթացը՝ առկա և հեռակա ուսուցման ձևերով ըստ մասնագիտությունների նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) կամ յուրաքանչյուր ուսումնական տարվա լրիվ կամ մասնակի կրթաթոշակի ձևով ընդունելության տեղերի՝ըստ որակավորումների (ուղղվածության), քննական հանձնաժողովների նախագահների հաստատման, ընդունելության արդյունքների ամփոփման աշխատանքները.

28. **կազմակերպում է մասնագիտական ուսումնական հաստատությունների ստեղծման, օպտիմալացման (խոշորացման) և լուծարման առաջարկությունների ներկայացման աշխատանքները.**

29. **կազմակերպում** է **մասնագիտական** կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության բնագավառում պետական պարգևների ներկայացման և գերատեսչական պարգևների շնորհման աշխատանքները.

30. **կազմակերպում** է պետական և հանրային մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա լրիվ կամ մասնակի կրթաթոշակի ձևով ընդունելության տեղերը՝ ըստ որակավորումների (ուղղվածության) հատկացնելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքները.

31. **կազմակերպում** է ոչ ֆորմալ կրթության զարգացմանը և իրազեկմանն ուղղված, ինչպես նաև մեծահասակների և ավագ սերնդի հարատև կրթության խրախուսմանն ուղղված միջոցառումները.

32. **կազմակերպում** է լրացուցիչ կրթական ծրագրերի երաշխավորման գործընթացի իրականացումը.

33. **կազմակերպում** է լրացուցիչ և շարունակական կրթության զարգացման, լրացուցիչ կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների, ոչ ֆորմալ կրթության վիճակագրական քանակական և որակական տվյալների հավաքագրման աշխատանքները.

34. **կազմակերպում** է լրացուցիչ և շարունակական կրթության բնագավարում իրականացվող ծրագրերի և այլ աշխատանքների համակարգումը.

35. **մասնակցում** է մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության բնագավառում դրամաշնորհների և գնման հայտերի տրամադրման աշխատանքներին.

36. **կազմակերպում** է քաղաքացիների դիմումների, կազմակերպությունների, գերատեսչությունների կողմից ստացված գրությունների քննարկումը և պատասխան գրությունների նախագծերի՝ այդ թվում նաև տեղեկանքների և հաշվետվությունների պատրաստման աշխատանքները.

37. կազմակերպում է մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակման և վերանայման աշխատանքները, ինչպես նաև այլ գերատեսչությունների, կազմակերպությունների և կառույցների կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ռազմավարական փաստաթղթերի, զեկույցների և այլ փաստաթղթերի վերաբերյալ առաջարկությունների և դիտողությունների ներկայացումը:

**Իրավունքները՝**

- Պահանջել այլ ստորաբաժանումներից համապատասխան տեղեկատվություն կամ կարծիք, համագործակցել իրավական ակտերիի նախագծերը ներկայացրած համապատասխան մարմինների հետ.
- հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների, պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.
- մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության բնագավառի օրենսդրության կատարելագործման կամ առկա բացերի վերացման նպատակով համապատասխան առաջարկներ ներկայացնել աշխատանքները կարգավորող նախարարի տեղակալին, առաջարկությունները քննարկելու նպատակով կազմակերպել քննարկումներ, կատարել աշխատանքի բաշխում ենթակաների միջև.
- մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության բնագավառում՝ Հայաստանի Հանրապետության, Կառավարության, Նախարարության անունից կնքվող միջազգային պայմանագրերի, փոխըմբռման հուշագրերի կազմման ընթացքում ստանալ համապատասխան տեղեկատվություն համաձայնագրի բովանդակության վերաբերյալ, տալ համապատասխան հանձնարարականներ՝ կապված նախագծի կատարման աշխատանքների հետ, համագործակցել մյուս կողմի հետ.
- լրացուցիչ և շարունակական կրթության բնագավարում իրականացվող ծրագրերի շրջանակում համավաքագրել տեղեկատվություն ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացնող կազմակերպությունների, այդ նպատակով կազմակերպել քննարկումներ, ներկայացնել առաջարկություններ ծրագրերի իրականացման ընթացքի բարեփխումների վերաբերյալ.
- մասնագիտական ուսումնական հաստատություններից պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն, պարզաբանումներ ուսումնական գործընթացի կազմակերպմանն առնչվող հարցերի վերաբերյալ:

**Պարտականությունները՝**

- Մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության բնագավառում՝ Հայաստանի Հանրապետության, Կառավարության, Նախարարության անունից կնքվող միջազգային պայմանագրերի, փոխըմբռման հուշագրերի վերաբերյալ տրամադրել իրավական եզրակացություն.
- **մշակել** մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության **համակարգի զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ պետական ծրագրերը.**
- **ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության գերատեսչությունների, այլ շահագրգիռ կազմակերպությունների, արտասահմանյան և միջազգային համապատասխան**

**կազմակերպությունների հետ կապերը մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտում**.

- **մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության ռազմավարության, զարգացման ծրագրի,** բնագավառի քաղաքականության, **համակարգերի զարգացման հիմնական ուղղություններ**ի և **աջակցության ծրագրերի** վերաբերյալ ներկայացնել առաջարկություն.
- համագործակցել մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության բնագավառի շահագրգիռ կազմակերպությունների, մասնավոր հատվածը ներկայացնող գործատուների, սոցիալական գործընկերների, հասարակական և ոլորտում այլ դերակատարների հետ՝ զարգացման ծրագրերի և քաղաքականության մշակման աշխատանքների կազմակերպման ընթացում.
- ամփոփել ՀՀ կառավարության գործունեության ծրագրի, ծրագրի իրականացման միջոցառումները, կրթության զարգացման պետական, ինչպես նաև ոլորտային հայեցակարգերի, ռազմավարական և բարեփոխումների ծրագրերի իրականացումը՝ մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության մասով.
- ներկայացնել տարբեր գերատեսչությունների և կազմակերպությունների կողմից մշակված և ՀՀ կառավարության կողմից հաստատված մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական ոլորտներին առնչվող ռազմավարությունների, ծրագրերի վերաբերյալ հաշվետվություններ, կատարել միջոցառումների մոնիթորինգ.
- **վերահսկել մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության համակարգի գործունեության մոնիթորինգի (մշտադիտարկման) կազմակերպումը, վերլուծությունը, մատուցվող կրթական և այլ ծառայությունների ծախսարդյունավետության և արդյունավետության գնահատումը**.
- պատրաստել Կառավարության հանձնարարականների հիման վրա հաշվետվությունները՝ ներառյալ տարեկան ամփոփիչ, **մասնագիտական կրթության և ուսուցման, լրացուցիչ և շարունակական կրթության մասով**.
- լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտի միջոցառումների և ծրագրերի վերաբերյալ ներկայացնել առաջարկություն:

## 2. Պաշտոնին ներկայացվող պահանջները

**3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

Բարձրագույն կրթություն

**3.2. Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

**3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը**

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ կրթության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

**3.4.Անհրաժեշտ կոմպետեցիաներ**

**Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծության, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

**Ընտրանքային կոմպետենցիաներ՝**

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Ժամանակի կառավարում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
6. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում:

**4.Կազմակերպական շրջանակը**

**4.1. Աշխատաքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

**4.2. Որոշումներ կայացնելու լիազորություններ**

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

**4.3 Գործունեության ազդեցությունը**

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն և ազդեցությունը սահմանափակվում է գերատեսչական մակարդակով:

**4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակեպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը:

**4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: